2· Հայկական պետութիւնը դրի դաշնակից պետութեանց և Միացեալ Նահանգների կամ Ազգերի Լիգայի երաշխաւորութեան տակ։

3· «Հաշտութեան Վեհաժողովի կողմից պէտք է մասնաւոր մանդատ տրի պետութիւններից մէկին, որն իր օժանդակութիւնը պիտի ընծայի Հայաստանին՝ փոխանցման մի ժամանակաշրջանի համար։ Այդ պաշտօնն ստանձնող պետութեան ընտրութիւնը պիտի լինի համախորհուրդ Հայկական Համագումարի հետ, որ այժմ գումարուած է Փարիզում և որը ներկայացնում է ամբողջ հայ ազգը։ Մանդատի տևողութիւնը լինելու է առնւազն 20 տարով»։

4· Հատուցում ջարդերի, տարագրութեանց, յափշտակութեանց և աւերումների պատճառած վնասների։ Հայաստանը պատրաստ է իր բաժինը ստանձնելու օսմանեան նախապատերազմական պարտքից։

5· Մանդատ առնող պետութիւնը պէտք է ստիպէ թիւրքերին՝ պարպել հայկական հողերը, ձեռնարկէ բնակչութեան ընդհանուր զինաթափութեան, պատժէ ջարդարարներին ու հայերի վերաբերմամբ անիրաւութիւն գործողներին, երկրից հեռացնէ կարգը խանգարող տարրերին, իրենց տեղերն ուղարկէ մուհաջիրներին և այլն։ «Հայկական ծագում ունեցող իւրաքանչիւր անհատ, որ հաստատուել է կամ ընիկ դարձել օտար երկրում, պէտք է լինի ազատ հինգ տարուայ ընթացքում ընտրելու նոր հպատակութիւն թէ՛ իր և թէ իր անչափահաս զաւակների անունով և դառնայ հայ քաղաքացի՝ նախապէս գրաւոր կերպով տեղեկացնելով երկու երկրների ձեռնհաս իշխանութիւններին»։*)

Այս պահանջները կազմեցին հայ քաղաքական շրջանների հետապնդման և հայ ժողովրդի ոգևորութեան առարկան։ Գործնականօրէն հաշուի առնուեցին նրանք միայն մի տարի յետոյ, երբ Վեհաժողովի սեղանի վրա եկաւ Օսմանեան կայսրութեան հարցը։ Երկու պատուիրակութիւնների դերը եղաւ մտքեր պատրաստել այդ ուղղութեամբ և Վեհաժողովի շրջանակներում ու պետութիւնների մօտ դիմումներ կատարել յօդուտ հայկական պահանջների։

Հայկական պատուիրակութիւնները առանձնապէս մեծ ճիգ էին թափում՝ հայկական հարցով հետաքրքրելու Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնց ներկայացուցիչները Վեհաժողովում և յատկապէս ինքը, նախագահ Վիլսընը սրտին մօտիկ էր ընդունում հայերին ու տրամադրութիւն ցոյց տալիս ստանձնելու Հայաստանի մանդատը։ Եթէ որև է մէկ մանդատ ընդունելու լինի, Ամերիկան առաջինը կընդունէ Հայաստանի մանդատը, — այս էր ամերիկացիների բանաձևը։ Եւ, անշուշտ, Վիլսընեան շրջանակը կը կամենար, որ Ամերիկան լինի Հայաստանի հոգատարը, և ինչո՞ւ միայն Հայաստանի· գուցէ և Անդրկովկասի, գուցէ և ողջ Փոքր-Ասիայի։ Հայկական «ծովածաւալ կայսերապաշտութեան» մէջ, ինչպէս կծու կերպով